

Հայաստանի Հանրապետություն

Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ  
« ԴԵՊԻ ՀԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ »

**ՄԱՍ Ա: ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ			
Ծրագրի անվանում	ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ		
Ենթաձրագրի անվանում	«Դեպի Հին Խնձորեսկ տանող ճանապարհի վերականգնում»		
Համայնք	Սյունիքի մարզ, Գորիս համայնք, Խնձորեսկ գյուղ		
Տեղանքում նախատեսվող գործողությունների շրջանակը	<p>Նախագծով առաջարկվում է գոյություն ունեցող քայքայված ճանապարհի վերականգնումը երկշերտ ասֆալտբետոնով: Ճանապարհի երկարությունը 3.2 կմ է, լայնությունը՝ 6 մ: Բուն չափերը չեն փոխվելու, իսկ քայքայված մակերեսը ծածկվելու է ասֆալտով: Նախատեսվում է նաև ճանապարհի երկու կողմերում մայթեր կառուցել՝ 560 մ երկարությամբ: Ամբողջ ճանապարհի երկայնքով տեղադրվելու է լուսավորության համակարգ: Բացի այդ, նախատեսվում է դիտահրապարակ կառուցել 59 մ պլատֆորմով: Դիտահրապարակը կկառուցվի ճանապարհի սկզբնամասից 1 կմ 580 մ հեռավորության վրա: Դիտահրապարակը այցելուների համար կառաջարկի շքեղ տեսարան դեպի ճոճվող կամուրջը և հնագույն քարանձավները:</p> <p>Վերականգնված ճանապարհի և ավտոկայանատեղիի միջև կկառուցվի հենապատ՝ բարձունքների տարբերությունները փոխհատուցելու համար: Հենապատը կկառուցվի երկաթբետոնից և կունենա 60 մ երկարություն և 1,5 մ բարձրություն:</p> <p>3.2 կմ երկարությամբ ճանապարհի վերականգնումը կապահովի բնակիչներին և զբոսաշրջիկներին ավելի լավ մուտք դեպի Հին Խնձորեսկ: Անապարհի բարելավումը կնպաստի նաև ճանապարհի երկայնքով նոր սպասարկման կետերի, ինչպես նաև նոր աշխատատեղերի և մշտական եկամտի աղբյուրների ստեղծմանը:</p>		
Ինստիտուցիոնալ համաձայնագրեր (ՀԲ)	Ծրագրի ղեկավար՝ Թաֆադզվա Իրվին Դյուբ	Երաշխիքների մասնագետ՝ Հմայակ Ավագյան (բնապահպանական) Վերա Դուզանզից (սոցիալական)	
Իրականացման համաձայնագրեր (ՀՀ)	Իրականացնող կազմակերպություն՝ ՀՏԶՀ Ասյա Օսիպովա (բնապահպանական) Քնարիկ Գրիգորյան	Իրականացման համաձայնագրեր (ՀՀ)	Իրականացնող կազմակերպություն՝ ՀՏԶՀ

	(սոցիալական)		
<b>Տեղանքի նկարագրություն</b>			
Վերականգնվող տարածքի սեփականատեր կազմակերպության անվանումը	Գորիս համայնք		
Վերանորոգվող/կառուցվող կառույցի հասցեն և գտնվելու վայրը	Գորիս համայնք, Խնձորեսկ գյուղ		
Հողի սեփականատերը  Ո՞վ է օգտագործում այդ հողը (ֆորմալ/ոչ ֆորմալ)	<p>Ճանապարհը պատկանում է Գորիս խոշորացված համայնքին: Ենթադրագիրը չի նախատեսում որևէ գործողություն, որը կարող է սահմանափակել այլ մարդկանց մուտքը դեպի իրենց տնտեսական ռեսուրսներ: Ճանապարհի երկայնքով չկան խանութներ կամ այլ մանրածախ առևտրի կետեր: Ենթադրագիրը նաև չի ենթադրում որևէ մասնավոր հողի ձեռքբերում: Ենթադրագիրը չի հանգեցնի բերքի, բերքատու ծառերի կամ տնամերձ ենթակառուցվածքների ժամանակավոր կամ մշտական կորստի: Տարբնակեցում չի նախատեսվում:</p> <p>Ճանապարհի վերջում առկա է կառույց, որը նախկինում ծառայել է որպես սրճարան, բայց այժմ չի գործում:</p> <p>Ասֆալտապատման շխատանքների ընթացքում ճանապարհի փակում չի նախատեսվում, բնակիչները նախապես կտեղեկացվեն նախատեսվող շինարարական աշխատանքների վերաբերյալ:</p>		
Տվյալ ծրագրի վայրի շրջապատող ֆիզիկական և բնական միջավայրի նկարագրությունը	<p>Ճանապարհը հարավում սկսվում M12 մայրուղուց: Այն տանում է դեպի ճոճվող կամուրջ և այնուհետև դեպի Հին Խնձորեսկ: Ճանապարհն այս պահին գտնվում է քայքայված վիճակում: Ճանապարհի առանձին հատվածների երկայնքով աճող երիտասարդ ծառերը չեն վնասվի վերականգնման աշխատանքների ընթացքում: Շուրջը բնակելի շենքեր կամ մասնավոր ձեռնարկություններ չկան:</p> <p>Պատմամշակութային ամենամոտ հուշարձանը գտնվում է շինհրապարակից 300 մ հեռավորության վրա և ազդեցության չի ենթարկվի:</p> <p>Դիտահրապարակի կառուցման համար հատկացված հողամասը չունի ծառեր, թփեր և բնակելի շենքեր:</p> <p>Հենապատի կառուցման համար հատկացված հողամասը գտնվում է ճանապարհի վերջում` չգործող ռեստորանի կողքին: Չկա բուսականություն, բնակելի տներ կամ բիզնես օբյեկտներ, որոնք կարող են խանգարել շինարարական աշխատանքներին:</p> <p>Ենթադրագրով նախատեսվում է բարելավել համայնքային ենթակառուցվածքների որակը և հուսալիությունը, աջակցել զբոսաշրջության և ազդեցիկ գարգացմանը, ինչպես նաև ստեղծել մասնավոր հատվածի ներդրումներ ներգրավելու միջավայր: Զբոսաշրջության հոսքի աճը ուղղակիորեն կազդի տեղական համայնքի վրա` զբոսաշրջության ոլորտի և ենթակառուցվածքների բարելավման միջոցով: Երկրորդային կարճաժամկետ օգուտներ են ակնկալվում նաև վերականգնողական աշխատանքներում տեղացիների ներգրավվածությունից:</p>		

**ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ**

Ազգային, տեղական օրենսդրություն և թույլտվություններ, որոնք պահանջվում են ծրագրում

ՀՀ հետևյալ օրենքները սահմանում են իրավական շրջանակը, որը կիրառելի է ծրագրի գործունեության համար.

- Մթնոլորտային օդի պաշտպանության մասին ՀՀ օրենքի (1994)

«Մթնոլորտային օդի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նպատակը ՀՀ

կառավարության հիմնական սկզբունքների սահմանումն է՝ ուղղված մթնոլորտային

օդի մաքրության ապահովմանը և օդի որակի բարելավմանը, օդի որակի վրա

քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ ազդեցությունների կանխարգելմանը և

մեղմմանը: Սույն օրենքը նաև կարգավորում է արտանետումների լիցենզիաները և

ապահովում է մթնոլորտային օդի աղտոտման առավելագույն թույլատրելի բեռներ /

կոնցենտրացիաներ և այլն:

Համաձայն այս օրենքի, կապալառուն պարտավոր է իրականացնել շինարարական

աշխատանքներ, ինչպես նաև աղբի տեղափոխում և ժամանակավոր պահպանում

փոշին և այլ արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:

Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)

Օրենքը իրավական և տնտեսական հիմք է տալիս թափոնների հավաքման,

տեղափոխման, հեռացման, մաքրման, վերածոցազորման, ինչպես նաև թափոնների

բացասական ազդեցության կանխարգելման համար՝ բնական պաշարների, մարդու

կյանքի և առողջության վրա: Օրենքը սահմանում է պետական լիազոր մարմինների,

ինչպես նաև թափոնների արտադրող կազմակերպությունների դերն ու

պարտականությունները թափոնների կառավարման գործընթացներում:

Համաձայն այս օրենքի, շինարարական գործունեությունից առաջացած թափոնները

պետք է վերամշակվեն ըստ անհրաժեշտության կամ տեղահանվեն նշանակված

վայրերում:

Ընտրված վայրերում շինարարական թափոնների և ավելցուկային նյութերի

հեռացումը պետք է զրավոր հաստատվի համայնքապետարանի կողմից:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ

	<p>օրենք (2014)</p> <p>Օրենքը սահմանում է գործունեության տեսակը, որը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և շրջակա միջավայրի փորձաքննության: Ըստ սույն օրենքի, վերականգնման առաջարկվող աշխատանքները ենթակա չեն շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության:</p> <p>- «ՀՀ քաղաքաշինության մասին» օրենք (1998)</p> <p>Համաձայն ՀՀ օրենսդրության ծրագրի իրականացման համար պահանջվում են հետևյալ թույլտվությունները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Շինարարական թույլտվություն***</li> <li>➤ Շինարարական աղբի թափոնակույտման վայրի թույլտվություն</li> </ul>
--	---

**ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

<p>Ե՞րբ/ուտե՞ղ է հանրային քննարկումը տեղի ունեցել/ունենալու</p>	<p>Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի նախնական տարբերակը կքննարկվի Zoom առցանց հարթակի միջոցով իրականացվող վիրտուալ հանդիպման ընթացքում, որին կմասնակցեն Գործի խոշորացված համայնքի՝ մասնավորապես Խնձորեսկ գյուղի բնակիչները:</p> <p>Նաև ԲՄԿՊ-ն կիրառարակվի ՀՏՁՀ-ի կայք էջում և համայնքի հայտարարությունների տախտակի վրա: Նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և բողոքների ներկայացման ընթացակարգը կկցվի շինարարական հրապարակի մոտակայքում:</p>
---	--

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

<p>Հավելված 1՝ Տարածքի քարտեզ, նկարներ</p> <p>Հավելված 2՝ Շինարարական աղբի հեռացման թույլտվություն</p> <p>Հավելված 3՝ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի վերաբերյալ հանրային քննարկման արձանագրություն</p> <p>Հավելված 4՝ Շինարարական թույլտվություն**</p>
---

\*Աշխատանքների վերահսկողի և իրականացնողի (կապալառուի) վերաբերյալ և հավելվածները կներկայացվեն ընտրված կապալառուի կողմից շինարարության մեկնարկի տրմանը զուգահեռ

\*\*Շինարարության թույլտվությունը կձեռքբերվի աշխատանքների մեկնարկից առաջ:

**ՄԱՍ Բ: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<b>ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՏԱԶՆՆՈՒՄ</b>			
Իրականացվող գործողությունները ներառելու են արդյոք նշվածներից որևէ մեկը	<b>Գործողություն</b>	<b>Կարգավիճակ</b>	<b>Խթանային գործողություններ</b>
	1. Ճանապարհի վերականգնում	[x] Այո [ ] Ոչ	Տես ստորև Բաժին Ա-ն
	2. Նոր շինարարություն	[x] Այո [ ] Ոչ	Տես ստորև Բաժին Ա-ն
	3. Կեղտաջրերի հեռացման առանձին համակարգ	[ ] Այո [x] Ոչ	Տես ստորև Բաժին Բ-ն
	4. Պատմական շենքեր և շրջաններ	[ ] Այո [x] Ոչ	Տես ստորև Բաժին Գ-ն
	5. Հողի ձեռքբերում	[ ] Այո [x] Ոչ	Տես ստորև Բաժին Դ-ն
	6. Վտանգավոր կամ թունավոր նյութեր	[ ] Այո [x] Ոչ	Տես ստորև Բաժին Ե-ն
	7. Ազդեցությունը անտառների և/կամ պաշտպանված տարածքների վրա	[ ] Այո [x] Ոչ	Տես ստորև Բաժին Զ-ն
	8. Բժշկական թափոնների կարգավորում/կառավարում	[ ] Այո [x] Ոչ	Տես ստորև Բաժին Է-ն
	9. Երթևեկության և հետիոտնային անվտանգություն	[x] Այո [ ] Ոչ	Տես ստորև Բաժին Ը-ն
10. Սոցիալական ռիսկերի կառավարում	[x] Այո [ ] Ոչ	Տես ստորև Բաժին Ը-ն	

**ԲԱԺԻՆ Գ: ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Գործունեություն	Պարամետր	Նվազեցման միջոցառումներ
0. Ընդհանուր պայմաններ	Ծանուցում եւ աշխատողների անվտանգություն	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Կառուցապատման և բնապահպանական հարցերով զբաղվող տեղական տեսչությունները ծանուցվել են առաջիկա գործողությունների մասին:</li> <li>➤ (բ) Հանրությունը աշխատանքների մասին իրազեկվել է՝ լրատվամիջոցներով և/կամ հանրությանը հասանելի կայքերի միջոցով համապատասխան ծանուցման միջոցով (այդ թվում աշխատանքների տեղամաս):</li> <li>➤ (գ) Ձեռք են բերվել կառուցապատման և/կամ հիմնանորոգման համար պահանջվող բոլոր իրավական թույլտվությունները:</li> <li>➤ (դ) Կապալառուն ֆորմալ կերպով համաձայնել է, որ բոլոր աշխատանքներն իրականացվելու են անվտանգ և օրինապահ եղանակով, որոնք նախագծվել է այնպես, որ հարևան բնակչության և շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հասցվեն նվազագույնի:</li> <li>➤ (ե) Աշխատողների ՄՊՄ-ը համապատասխանում է միջազգային լավ գործելակերպին (միշտ կրում են պաշտպանիչ գլխարկներ, ըստ անհրաժեշտության՝ դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, անվտանգության գոտիներ և կոշիկներ):</li> <li>➤ (զ) Տեղամասում տեղադրված համապատասխան նշանները տեղեկացնում են աշխատողներին այն հիմնական կանոնների և կարգերի մասին, որոնց նրանք պետք է հետևեն:</li> </ul>
2. Ընդհանուր շիրարարական պայմաններ	Օդի որակ	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Ներքին քանդման աշխատանքների ընթացքում սահող բեկորները պետք է օգտագործվեն առաջին հարկից վեր:</li> <li>➤ (բ) Քանդված բեկորները պահվելու են առանձնացված տարածքում և ցողվում են ջրային շիթերով՝ բեկորների փոշին նվազեցնելու նպատակով:</li> <li>➤ (գ) Օդաճնշական հորատման/պատերի քանդման ընթացքում փոշին պետք է ճնշել անընդհատ ջրման կամ տեղամասում փոշու ներփակման օբյեկտների տեղադրման միջոցով:</li> <li>➤ (դ) Շրջապատող միջավայրը (մայթեր, ճանապարհներ) պետք է բեկորներից զերծ պահվի փոշին նվազագույնի հասցնելու համար:</li> <li>➤ (ե) Տեղամասում չպետք է կատարվի շինարարական նյութերի/թափոնների բաց այրում:</li> <li>➤ (զ) Տեղամասերում չպետք է լինեն շինարարական մեքենաների անհարկի կուտակումներ:</li> </ul>
	Աղմուկ	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Շինարարական աղմուկը պետք է սահմանափակվի թույլտվության մեջ սահմանված ժամերով:</li> </ul> <p>(a) (բ) Աշխատանքների ընթացքում գեներատորների շարժիչների ծածկերը, օդի կոմպրեսորները և</p>

		<p>հոսանքով աշխատող այլ մեխանիկական սարքավորումները պետք է լինեն ծածկված, և 56 սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորինս հեռու:</p>
	Ջրի որակ	<p>(a) (ա) Տեղամասում պետք է իրականացվեն էրոզիայի և ջրաբերուկների կառավարման համապատասխան միջոցառումներ, օրինակ՝ խոտի դեզեր և/կամ տիղմից ցանկապատեր՝ տեղամասից դուրս եկող և մոտակա ջրահոսքերի և գետերի չափազանց մեծ պղտորության պատճառ հանդիսացող ջրաբերուկների արտահոսքը կանխելու համար:</p>
	Թափոնների կառավարում	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Քանդման և կառուցապատման աշխատանքներից ակնկալվող բոլոր թափոնների գլխավոր տեսակների համար պետք է նախանշվեն թափոնների հավաքման և հեռացման ուղիները:</li> <li>➤ (բ) Կառուցապատման և քանդման արդյունքում առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն ընդհանուր աղբից, օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղում թափոնների տեսակավորման և համապատասխան տարաներում պահպանման միջոցով:</li> <li>➤ (գ) Շինարարական թափոնները պետք է հավաքվեն և հեռացվեն համապատասխան կարգով լիցենզիա ստացած աղբահանող ընկերությունների կողմից:</li> <li>➤ (դ) Թափոնների հեռացման մասին արձանագրությունները պետք է պահվեն որպես ապացույց առ այն, որ կառավարումը պատշաճ իրականացվել է՝ ըստ նախատեսվածի:</li> </ul> <p>(a) (ե) Իրագործելիության դեպքում, կապալառուն կրկնօգտագործում և վերամշակում է համապատասխան կենսունակ նյութերը (բացի ասբեստից):</p>
Բ. Կեղտաջրերի մաքրման անհատական համակարգ	Ջրի որակ	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Կառուցապատման տեղամասերից սանիտարական թափոնների և կոյուղաջրերի հեռացման մեթոդը (տեղադրում կամ վերակառուցում) պետք է հաստատվի տեղական իշխանությունների կողմից:</li> <li>➤ (բ) Նախքան ընդունող ջրահոսքեր արտանետվելը՝ ջրահեռացման առանձին համակարգերի հոսաջրերը պետք է մաքրում անցնեն, որպեսզի համապատասխանեն հոսքաջրերի որակի և կոյուղաջրերի մաքրման վերաբերյալ պետական նորմերով սահմանված՝ որակի նվազագույն չափորոշիչներին:</li> <li>➤ (գ) Պետք է իրականացվի ջրահեռացման նոր համակարգերի մոնիտորինգ (նախքան/հետո):</li> <li>➤ (դ) Շինարարական մեքենասարքավորումները պետք է լվացվեն միայն առանձնացված տարածքներում, որտեղ հոսքաջուրը չի աղտոտի ջրային մարմինների բնական մակերեսը:</li> </ul>
Գ. Պատմական շինություն(ներ)	Մշակութային ժառանգություն	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Եթե շինությունը հատուկ նշանակության պատմական կառույց է, մոտ է այդպիսի կառույցի, կամ գտնվում է հատուկ պատմական տարածքում, ապա տեղական իշխանությունները պետք է ծանուցվեն, և նրանց համաձայնությունը պետք է ստացվի, իսկ շինարարական բոլոր աշխատանքները պետք է պլանավորվեն և իրականացվեն տեղական և պետական օրենսդրության համաձայն:</li> <li>➤ (բ) Հարկ է ապահովել, որ նորմերը գործի դրվեն այնպես, որ հորատման կամ</li> </ul>



		<p>շինարարության 57 ընթացքում գտնված գեղարվեստական նշանակություն ունեցող առարկաները կամ այլ հնարավոր գտածոները հաշվառվեն, համապատասխան պաշտոնատար անձինք տեղեկացվեն, և աշխատանքները հետաձգվեն կամ փոփոխվեն՝ հաշվի առնվելով այդ գտածոները:</p>
Գ. Հողի օտարում	Հողի օտարման պլան/շրջանակ	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Եթե հողագրկում չի նախատեսվել, սակայն դա անհրաժեշտ է, կամ եթե օրինական կամ ապօրինի հողօգտագործողների եկամուտների կորուստը չի նախատեսվել, սակայն կարող է տեղ գտնել, ապա պետք է անհապաղ խորհրդակցել Բանկի աշխատանքային խմբի ղեկավարի հետ:</li> <li>➤ (բ) Պետք է իրականացվի հողի օտարման հաստատված պլանը/շրջանակը (եթե ծրագիրը պահանջում է):</li> </ul>
Ե. Թունավոր նյութեր	Ասբեստի կառավարում	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Եթե ծրագրի իրականացման տեղամասում ասբեստ կա, ապա այն պետք է նշվի որպես վտանգավոր նյութ:</li> <li>➤ (բ) Հնարավորության դեպքում ասբեստը պետք է համապատասխանաբար տարայավորվի և կնքվի՝ դրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով:</li> <li>➤ (գ) Նախքան ասբեստը հեռացնելը (եթե հեռացնելն անհրաժեշտ է), այն պետք է մշակվի խոնավեցնող նյութերով՝ ասբեստի փոշին նվազագույնի հասցնելու նպատակով:</li> <li>➤ (դ) Ասբեստը պետք է հեռացվի և տնօրինվի հմուտ և փորձառու մասնագետների կողմից:</li> <li>➤ (ե) Եթե ասբեստային նյութը ենթակա է ժամանակավոր պահպանության, ապա թափոնները պետք է ապահով պահվեն փակ կոնտեյներներում և նշվեն համապատասխան նշանով: Պետք է անվտանգության միջոցառումներ ձեռնարկվեն տեղամասից ապօրինի հեռացման դեմ:</li> <li>➤ (զ) Հեռացված ասբեստը չպետք է կրկնօգտագործվի:</li> </ul>
	Թունավոր վնասակար թափոնների կառավարում	<p>ա) Բոլոր վտանգավոր կամ թունավոր նյութերի ժամանակավոր պահեստավորումը շինհրապարակում իրականացվում է անվտանգ բեռնարկղերում, որոնք պիտակավորված են կազմի, հատկությունների և բեռնաթափման վերաբերյալ մանրամասներով:</p> <p>բ) Վտանգավոր նյութերի բեռնարկղերը տեղադրվում են արտահոսք չպարունակող տարաների մեջ՝ կանխելու թափումը և արտահոսքը:</p> <p>գ) Թափոնները տեղափոխվում են հատուկ լիցենզավորված փոխադրողների կողմից և տեղադրվում են արտոնագրված օբյեկտում:</p> <p>դ) Թունավոր բաղադրիչների կամ լուծիչների կամ կապարի վրա հիմնված ներկեր չեն օգտագործվում:</p>

<p>Զ. Ազդեցության ենթակա անտառներ, խոնավահողեր և/կամ պահպանվող տարածքներ</p>	<p>Պաշտպանվածություն</p>	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Ճանաչված բոլոր բնական հաբիտատները, խոնավահողերը և պահպանվող տարածքները, որոնք գտնվում են տարվող աշխատանքների անմիջական հարևանությամբ, չպետք է վնասվեն կամ օգտագործվեն, բոլոր աշխատողներին արգելվում է որս անել, սնունդ հայթայթել, ծառահատումներ կամ վնասակար որևէ այլ գործունեություն իրականացնել:</li> <li>➤ (բ) Շինարարական աշխատանքների հարևանությամբ գտնվող խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և գույքագրվեն, խոշոր ծառերի վրա պետք է տեղադրվեն նշաններ և դրանք պետք է շրջափակվեն ցաանկապատով, դրանց արմատային համակարգը պետք է պաշտպանվի, և պետք է խուսափել ծառերը որևէ կերպ վնասելուց:</li> <li>➤ (գ) Հարակից խոնավահողերը և ջրահոսքերը պետք է պաշտպանված լինեն կառուցապատվող տեղամասի հոսքաջրերից՝ էրոզիայի և ջրաբերուկների կառավարման համապատասխան կառուցվածքի միջոցով, այդ թվում խոտի դեզեր և տիդմային ցանկապատեր:</li> <li>➤ (դ) Հարակից տարածքներում, մասնավորապես պահպանվող տարածքներում չպետք է լինեն չլիցենզավորված ողողահորեր, քարհանքեր կամ աղբավայրեր:</li> </ul>
<p>Է. Բժշկական թափոնների հեռացում</p>	<p>Բժշկական թափոնների կառավարման ենթակառուցվածք</p>	<ul style="list-style-type: none"> <li>➤ (ա) Պետական նորմերի համաձայն կապալառուն ապահովում է, որպեսզի նոր կառուցված և/կամ հիմնանորոգված առողջապահական օբյեկտն ունենա բժշկական թափոնների հեռացման բավարար ենթակառուցվածք, այդ թվում՝             <ol style="list-style-type: none"> <li>1) այլ թափոնների հեռացման համակարգից առանձնացված հատուկ հարմարություններ բժշկական թափոնների համար (այդ թվում՝ աղակալված կտրող գործիքներ և մարդկային հյուսվածքներ կամ հեղուկներ),</li> <li>2) բժշկական թափոնների պահպանման համապատասխան հարմարությունների առկայություն, և</li> <li>3) եթե աշխատանքները նախատեսում են թափոնների վերամշակում օբյեկտի ներսում, ապա՝ համապատասխան աղբահանության տարբերակների առկայություն և իրականացում:</li> </ol> </li> </ul>
<p>Ը. Երթևեկության և հետիոտնային ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքներով պայմանավորված ուղղակի և անուղղակի վտանգ հանրային երթևեկության և հետիոտների համար</p>	<p>(ա) Պետական նորմերի համաձայն կապալառուն ապահովում է կառուցապատման տեղամասի պատշաճ անվտանգությունը և շինարարության հետ կապված երթևեկության կարգավորումը: Մա ներառում է նաև՝</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ նշանների տեղադրում, նախազգուշացնող նշաններ, խոչընդոտներ և շրջանց. տեղամասը պետք է հստակ տեսանելի լինի, իսկ հանրությունը պետք է տեղեկացված լինի պոտենցիալ վտանգների մասին,</li> <li>▪ երթևեկության կառավարման համակարգ և աշխատակազմի վերապատրաստում, մասնավորապես տեղամաս մուտքի և տեղամասի մոտակայքում խիտ երթևեկության մասով: Անվտանգ անցումներ հետիոտների համար այն վայրերում, որտեղ 59</li> </ul>

		<p>շինարարական աշխատանքների հետ կապված երթևեկությունը խոչընդոտներ է ստեղծում,</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ աշխատանքային ժամերի համապատասխանեցում տեղական երթևեկության մոդելին. օրինակ, ծանրաբեռնված ժամերին կամ խոշոր եղջերավոր անասունների շարժի ժամանակ խուսափել խոշոր տրանսպորտային աշխատանքներից,</li> <li>▪ երթևեկության ակտիվ կառավարում տեղամասում՝ պատրաստված և տեսանելի աշխատողների կողմից, եթե դա անհրաժեշտ է հանրության հարմարավետ երթևեկի համար,</li> <li>▪ դեպի այլ օբյեկտներ, խանութներ, բնակելի տներ անվտանգ և անխափան մուտքի ապահովում վերանորոգման աշխատանքների ընթացքում, եթե տվյալ շինությունները բաց են հանրության համար:</li> </ul>
<p><b>Թ.</b> Սոցիալական ռիսկերի կառավարում</p>	<p>Հանրային կապերի կառավարում</p>	<p>Շինարարն ունի տեղական հետադարձ կապն ապահովող անձնավորություն ով նշանակված է ապահովելու տեղական բնակչության հետ հաղորդակցությունը և առաջարկություններ/բողոքներ ստանալը</p> <p>ա. Տեղական բնակչության հետ իրականացվել են խորհրդակցություններ նույնականացնելու և ակտիվ ձևով կառավարելու տեղական բնակչության և դրսից բերված աշխատուժի միջև ծագող հնարավոր կոնֆլիկտները</p> <p>բ. Կապալառուն բարձրացնում է տեղական բնակչության իրազեկվածությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկերի վերաբերյալ , որոնք կարող են կապված լինել դրսից բերված աշխատուժի հետ</p> <p>գ. Բնակչությունը համապատասխան դեպքերում իրազեկված է շինարարական աշխատանքների ժամանակացույցի վերաբերյալ, ծառայությունների կասեցման, երթևեկության տարանցիկ ուղիների և ավտոբուսների ժամանակավոր կանգառների, պայթեցման և քանդման աշխատանքների,</p> <p>դ. Շինարարական աշխատանքները չեն իրականացվում գիշերային ժամերին: Անհրաժեշտության դեպքում գիշերային աշխատանքների համար կկազմվեն պատշաճ ժամանակացույցեր և համայնքները պատշաճ կերպով կտեղեկացվեն այդ մասին, այնպես որ հնարավոր կլինի ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:</p> <p>Ցանկացած ծառայության դադարեցումից նվազագույնը հինգ օր առաջ (ներառյալ ջուր, էլեկտրոններգիա, հեռախոս, ավտոբուսային երթուղիներ), համայնքի անդամները իրազեկվում են նախօրոք ծրագրի վայրում, ավտոբուսային կազառներում և ազդակիր տներում հայտարարությունների միջոցով:</p>

	<p>Աշխատուժի կառավարում</p>	<p>ա. Աշխատանքային ճամբարները կտեղակայվեն տեղական համայնքներից հեռու, այնքանով որքանով դա հնարավոր է:</p> <p>բ. Աշխատանքային ճամբարների տեղակայումը և գործառնությունը կիրականացվի հարևան համայնքների հետ խորհրդակցությունների արդյունքում</p> <p>գ. Կապալառուն կվարձի այնքանչորակավորված և կիսաորակավորված աշխատողներ տեղական համայնքներից, որքան հնարավոր է: Տեղական բնակչության ներգրավումը բարձրացնելու նպատակով կիրականացվեն թրեյնինգներ այնտեղ որտեղ այն տեղին է և երբ անհրաժեշտ է:</p> <p>դ. Համապատասխան սանիտարական հարմարությունների (գուգարաններ և լվացարան) առկայություն շինարարության վայրում՝ ներառյալ տաք և սառը հոսող ջրի, օձառների և ձեռքերը չորացնելու հարմարություններ:</p> <p>(a) Կապալառուն բարձրացնում է աշխատողների իրազեկվածությունը տեղական բնակչության հետ հարաբերությունների կառավարման, վարքագծի կանոնների վերաբերյալ համաձայն միջազգային գործելակերպին և խստորեն հետևում է դրանց, ներառյալ աշխատողներին աշխատանքից հեռացնելը և համապատասխան ֆինանսական տույժերի նշանակումը:</p>
--	-----------------------------	---

ՄԱՍ Դ՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԻԼԵՐՈՒՄ

Գործունեություն	Ինչ (պարամետր է վերահսկվելու)	Որտեղ (է պարամետրը վերահսկվելու)	Ինչպես (է պարամետրը վերահսկվելու)	Երբ (սահմանել հաճախականությունը/կամ շարունակականությունը)	Ինչու (է պարամետրը վերահսկվելու)	Ով (է պատասխանատու պարամետրի վերահսկման համար)
<b>Շինարարության փուլ</b>						
1. Շինարարական նյութերի մատակարարում	Շինարարական նյութերի գնումը լիցենզավորված մատակարարներից	Մատակարարների գրասենյակներ և պահեստներ փոխառության վայրեր	Փաստաթղթերի ստուգում	Նյութերի մատակարարման վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման ընթացքում	Ապահովել շինարարության տեխնիկական որակը  Պաշտպանել մարդկանց առողջությունը և միջավայրը	ՀՏՁՀ  ՏՎԿ
2. Հողային աշխատանքներ  Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում  Շին տեխնիկայի և մեքենաների տեղաշարժը	Շինարարական տեխնիկայի և մեքենաների տեխնիկական վիճակը  Բեռնատար մեքենաների թափքի ծածկի ապահովումը՝ շինարարական թափոններ և նյութեր տեղափոխելիս և 20 կմ/ժ չգերազանցող արագությամբ:  Շինարարական տրանսպորտային միջոցների և մեքենաների տեղափոխում սահմանված երթուղիներով և	Շին հրապարակի մուտքեր և ելքեր	Նախապես համաձայնեցված տեղափոխության երթուղիներ և ակնադիտական գնում  Վերակառուցվող ճանապարհի տեղամասի գնում	Չնախատեսված ամսական մոնիտորինգային ստուգայցեր	Երջակա միջավայրում արտանետումների կառավարում  Աղմուկի և թրթռումների կառավարումը գործող նորմերին համապատասխան  Հետիոտնային անցումների անվտանգության, երթևեկության և արտակարգ պատահարների կառավարում	ՀՏՁՀ  ՏՎԿ

	<p>աշխատանքային ժամերին (9:00-18:00):</p> <p>Ջրցանման իրականացում՝ փոշի առաջացնող շինարարական աշխատանքների ընթացքում</p>					
3.Շինարարական սարքավորումների պահպանում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և շինարարական տեխնիկայի լվացում շինարարական կայանից դուրս կամ բնական հոսանքներից առավելագույն հեռավորության վրա</li> <li>- շինարարական սարքավորումների լիցքավորումը կամ քսանյութը՝ շինարարության վայրից դուրս կամ կանխորոշված սահմանափակված տարածքում</li> </ul>	Շինհրապարակ	Գործողությունների վերահսկում	Աշխատանքային ժամերի ընթացքում ընտրողական այցեր	<ul style="list-style-type: none"> <li>- Խուսափել սարքավորումների շահագործման պատճառով նավթամթերքների և հողի աղտոտումից:</li> <li>- Հրդեհի դեպքում ժամանակին տեղայնացնել և նվազեցնել ակնկալվող վնասը</li> </ul>	ՀՏՁՀ ՏՎԿ
4.Շինարարական թափոնների առաջացում	Թափոնների ժամանակավոր կուտակում շինհրապարակի նախապես սահմանված վայրերում և պարբերաբար հեռացում թույլատրված աղբավայր	Շինհրապարակ և թափոնների հեռացման վայր	Շինհրապարակի դիտագնում՝ ներառյալ վերակառուցվող ճանապարհի սկիզբը և վերջը	Պարբերաբար շինարարության ընթացքում առանց նախապես զգուշացման այցելություններ/ստուգումներ	Շինհրապարակի և հարակից միջավայրի շին աղբի կուտակումների կանխարգելում	ՀՏՁՀ ՏՎԿ
5. Շինարարության համար	Անձնակազմին համազգեստի և անվտանգության	Շինհրապարակ	Ճանապարհի վերակառու	Շինարարության ամբողջ փուլում ամսական	Նվազեցնել պատահարների	ՀՏՁՀ

<p>աշխատուժի ներգրավում</p>	<p>սաղավարտների ապահովում</p> <p>Աշխատանքի անվտանգության հրահանգավորում և գրանցում</p> <p>Աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում օրվա աշխատանքային ժամերին (9:00-18:00) և թույլատրելի նորմերի տիրույթում</p> <p>Երթևեկության կարգավորման և անվտանգության միջոցառումների իրականացում</p>		<p>ցվող հատվածի՝ ներառյալ վերակառուցվող ճանապարհի սկզբի և վերջի դիտագնում</p>	<p>այցելությունների ընթացքում</p>	<p>հավանականությունը</p> <p>Պաշտպանել աշխատողներին առողջությունը և աշխատանքի անվտանգությունը</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարումը գործող նորմերին համապատասխան բացառելու համար հնարավոր բոլորները</p>	<p>ՏՎԿ</p>
<p>6.Գործունեություն մասնավոր սեփականության և այլ գույքի կողքին</p>	<p>Խուսափել մասնավոր գույքի սահմանների խախտումներից կամ պատահականորեն վնասելու դեպքերից (պատերի և ցանկապատերի հարևանությամբ կիրառել փոքր չափերի մեքենաներ կամ ձեռքով աշխատանք, շինարարական նյութերի պահեստավորումը և թափոնների հավաքումը կազմակերպել մասնավոր սեփականությունից հեռու և այլն ):</p> <p>Մասնավոր սեփականությունը ոչ դիտավորյալ վնասի հասցման դեպքում արագ վերականգնել նախնական վիճակը կամ ավելի լավ</p>	<p>Մասնավոր սեփականության հարևանությամբ իրականացվող աշխատանքներ</p>	<p>Զննում և փորձաքննություն</p>	<p>Շինարարության ամբողջ ընթացքում</p>	<p>Նվազեցնել մասնավոր սեփականությանը վնասի հասցման հավանականությունը:</p> <p>Բացառել մասնավոր սեփականության վրա սեփականատիրոջ կամ օգտագործողի իրավունքներին ժամանակավոր կամ մշտական խախտումը:</p>	<p>ՀՏՁՀ</p> <p>ՏՎԿ</p>

	կարգավիճակը: Մասնավոր սեփականության վրա ակնկալվող ժամանակավոր ազդեցության դեպքում սեփականատերերին նախապես տեղեկացնել և երաշխավորել գույքի վերականգնումը, ձեռքբերել սեփականատերերի գրավոր համաձայնությունը միջամտության համար և անհապաղ վերականգնել վնասը: Եթե աշխատանքների ընթացքում մասնավոր հողի օգտագործման կարիք է առաջանում, մի մտեք ազդակիր տարածք մինչև տարաբնակեցման ծրագրի ամբողջական մշակումն ու իրականացումը:					
7. Շինհրապարակների վերամշակումը և կանաչապատումը	Անհրաժեշտության դեպքում, շինհրապարակի և մշտական մուտքի ճանապարհների և տարածքի կանաչապատում և ավարտական մաքրում	Շինհրապարակ և մուտքի ճանապարհներ	Ջննում և փորձաքննություն	Շինարարության վերջնական փուլում	Նվազագույնի հասցնել լանդշաֆտի գեղագիտական արժեքի կորուստը շինարարական գործունեության արդյունքում	ՀՏՁ ՏՎԿ
8. Կենցաղային թափոնների կառավարում	Աղբամանների տեղադրում և աղբի պարբերաբար հեռացում նախատեսված աղբավայր	Վերակառուցված ճանապարհ	Վերականգնված ճանապարհի գնում	Շահագործման փուլ	Աղբի կուտակումների և կեղտաջրերի կառավարում	ՀՏՁ Գորիս համայնք
9.Փոշու կուտակում	Օդի աղտոտման մակարդակը շինհրապարակում	Շինհրապարակ և մուտքի ճանապարհ	Տեսողական գնում	Կրկնվող	Նվազեցնել ռիսկերը աշխատակազմի և հարևան	ՀՏՁ ՏՎԿ



		ներ			համայնքների համար	
10. Պատահական գտածոներ	<p>- Աշխատանքների դադարեցում անմիջապես փոփոխության գտածոների բախումից հետո.</p> <p>- Պաշտոնական հաղորդակցություն ՀՀ հուշարձանների և պատմական վայրերի պաշտպանության գործակալության հետ՝ պատահական գտածոների հետ.</p> <p>- Անհրաժեշտ պեղումների և տեղանքների պահպանման ուղղությամբ ձեռնարկված ժամանակին պայմանավորվածություններ</p>	Շինհրապարակ	<p>- Պատահական գտածոների գնում.</p> <p>- Ներկայացված փաստաթղթերի ստուգում</p>	Շինարարության ամբողջ ընթացքում	Համոզվել, որ մշակութային հուշարձանը չի վնասվել շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՏՁՀ ՏՎԿ Հուշարձանների և պատմական վայրերի պաշտպանության գործակալություն
11. Հողային աշխատանքներ	<p>Հողի վերամշակման համար հողի հեռացում և ժամանակավոր պահեստավորում.</p> <p>- Պեղված հողի ժամանակակից պահպանումը որոշված վայրերում.</p> <p>- Անհրաժեշտության դեպքում պեղված հողի պահպանում և ավելցուկային զանգվածը գրավոր հաստատված վայրեր տեղափոխություն:</p>	Շինհրապարակ	Գործողությունների գնում	Հողային աշխատանքների ընթացքում	Բուսականության կորստի սահմանափակում հողային աշխատանքների արդյունքում և մասնիկներով վերգետնյա ջրամբարների աղտոտումը նվազագյունի հասցնել  Նվազեցնել ստորգետնյա և վերգետնյա ջրերի աղտոտումը հողով:	ATDF Technical Supervisor
12. Բողոքների լուծման մեխանիզմի գործածում	Ենթաձրագրի վերաբերյալ բողոքների կամ հարցերի վերաբերյալ հանրային իրավունք: Դիմում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարին	Շին հրապարակ	Փորձաքննություն	Շինարարության ամբողջ ընթացքում	Բողոքի քննարկում և լուծում 2 շաբաթվա ընթացքում:  Խնդրի լուծման ձախողման	ՀՏՁՀ ՏՎԿ Նախարարություն


	<p>(համայնքային իշխանություններին): Բողոքների համակարգողի նշանակում (բողոքների ստացում, վերանայում և բացատրություն, բողոքների գրանցքում մատյանում և փորձ լուծել դրանք ոտքի վրա):</p> <p>Բողոքատուն կարող է դիմել անմիջապես ՀՏՁՀ՝ թե՛ զիժ ծառայության (010 24 01 59), փոստային նամակի (Երևան 0037, Կ. Ուլնեցի 31), էլեկտրոնային նամակի (support@atdf.am).կամ ՀՏՁՀ-ի կայքում տեղադրված գործիքի միջոցով (<a href="http://atdf.am/hy/Home/ContactUs">http://atdf.am/hy/Home/ContactUs</a>):</p>				<p>դեպքում նախարարության կամ իրականացնող կազմակերպության մակարդակում, ԾԱԵԱ-ն կարող է դիմել դատարանին որոշման կայացման համար՝ ՀՀ օրենսդրության համաձայն</p>	
--	---	--	--	--	--	--

<p><b>Շահագործման փուլ</b></p>						
--------------------------------	--	--	--	--	--	--

<p>1. Տարածքի շահագործում և պահպանում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ճանապարհի մակերեսը և եզրերը մաքրել տեղափոխվող տրանսպորտային միջոցներից առաջացած աղբից.</li> <li>- Ճանապարհային պատահարների դեպքում բեռների հեղուկ կամ փոշու թափման ժամանակին արգելափակում, ոչնչացում և</li> </ul>	<p>Ճանապարհի երթուղային և հետիոտնային հատվածներ</p>	<p>Ջննում</p>	<p>Տեղի ունեցած պատահարից հետո</p> <p>Պարբերաբար, որը որոշվելու է տեղական քաղաքապետարանի կողմից</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ապահովել երթևեկության անվտանգությունը և կանխել շրջակա միջավայրի աղտոտումը.</li> <li>- Ապահովել ճանապարհային</li> </ul>	<p>Գործիսի համայնքապետարան</p>
---	--	---	---------------	---	---	--------------------------------

	<p>հեռացում: - Ճանապարհների պահպանման աշխատանքների թափոնների հավաքումը և ժամանակին հեռացումը որոշված աղբավայր:</p>				<p>միջանցքի գեղագիտական տեսքը:</p>	
<p>2. Զրահեռացման համակարգի պահպանում</p>	<p>Պահպանել ջրահեռացման համակարգի շահագործման շարունակականությունը</p>	<p>Ճանապարհի երթուղային և հետիոտնային հատվածներ</p>	<p>Զննում</p>	<p>Պարբերական՝ ելնելով համայնքապետարանի որոշումից</p>	<p>Ապահովել երթևեկության անվտանգությունը և նվազեցնել ճանապարհի վերականգնման հաճախականությունը և ծախսերը</p>	<p>Գործիսի համայնքապետարան</p>
<p>3.Տեղանքի պահպանում և պաշտպանություն</p>	<p>Ոչ օրինական շինարարություն և հողօգտագործում</p>	<p>Վերականգնված տարածք</p>	<p>Զննում</p>	<p>Շահագործման ամբողջ ընթացքում</p>	<p>Պահպանել տարածքի և շրջակա միջավայրի էսթետիկ տեսքը</p>	<p>Գործիսի համայնքապետարան</p>
<p>4. Փողոցային լուսավորության համակարգի գործարկում և սպասարկում</p>	<p>Զեռնարկվում է լուսավորության համակարգի կանոնավոր սպասարկում</p>	<p>Լուսավորության ցանց</p>	<p>Պարբերական ստուգում</p>	<p>Շահագործման ամբողջ ընթացքում</p>	<p>Լուսավորության համակարգի սարքին և անվտանգ վիճակի պահպանում</p>	<p>Գործիսի համայնքապետարան</p>
<p>5. Կենցաղային աղբի կառավարում</p>	<p>Աղբարկղերի տեղադրումը դիտահրապարակում և թափոնների ժամանակին տեղափոխումը վերջնական հեռացման վայր</p>	<p>Դիտահրապարակ</p>	<p>Ստուգում</p>	<p>Շահագործման ընթացքում</p>	<p>Պահպանել տարածքի և շրջակա միջավայրի էսթետիկ տեսքը</p>	<p>Գործիսի համայնքապետարան</p>

Հավելված 1: Քարտեզ և նկարներ



### **Հավելված 3. Քննապահպանական և սոցիալական կառավարման պլանի վերաբերյալ իրականացված հանրային քննարկման արձանագրություն**

Հանրային քննարկում է իրականացվել Սեպտեմբերի 9-ին՝ ժամը 12:00-ին Zoom առցանց հարթակի միջոցով «Դեպի Հին Խնձորեսկ տանող ճանապարհի վերականգնում» ենթածրագրի շրջանակներում, որը իրականացվելու է Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների ծրագրի շրջանակներում: Քննարկման ամսաթվի և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվել է ՀՏՁ-ի կայք էջում (atdf.am), Գորիսի համայնքապետարանի և Խնձորեսկի վարչական շենքի տեղեկատվական տախտակներին և Գորիս համայնքի ֆեյսբուքյան էջում:

Հանրային քննարկումը կազմակերպվել է ՀՏՁ սոցիալական մասնագետ Քնարիկ Գրիգորյանի և շրջակա միջավայրի մասնագետ Ասյա Օսիպովայի կողմից: Քննարկմանը մասնակցել են նախագծային կազմակերպության երկու ներկայացուցիչ և Գորիս համայնքի բնակիչները, ընդհանուր առմամբ 11 **մասնակից** էր ներգրավված քննարկման մեջ, որոնցից **5-ը**՝ կին:

ՀՏՁ-ի սոցիալական մասնագետը ներկայացրեց ենթածրագրի նպատակը: Նախագծի հեղինակ Դ. Հայրապետյանը ներկայացրեց աշխատանքները, որոնք նախատեսվում է իրականացնել ենթածրագրի շրջանակներում:

Ինչպես նաև ներկայացվեցին հնարավոր սոցիալական ռիսկերի և վերջիններիս բացառման կամ մեղմացման միջոցառումների մասին: Ք. Գրիգորյանը մատնանշեց, որ ծրագիրը չի ներառում տարաբնակեցում, քանի որ շինարարության համար առաջարկվող տարածքը հանրային սեփականություն է, բնակեցված չէ և չի օգտագործվում այն նպատակներով: Նա հակիրճ ներկայացրեց Տարաբնակեցման քաղաքականության շրջանակի հիմնական առանձնահատկությունները:

Ք. Գրիգորյանը նաև խոսեց հիմնական սոցիալ-տնտեսական մարտահրավերների մասին՝ ներառյալ կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներառումը ենթածրագրի արդյունանների օգտագործման տեսանկյունից: Նա ընդգծեց, որ այս խմբերը պետք է ունենան հավասար հնարավորություններ ներգրավված լինելու ծրագրի օգուտների մեջ:

Ք. Գրիգորյանը բացատրեց նաև թե ինչպես է գործում բողոքների ներկայացման մեխանիզմը ՄՆՏՁ ծրագրի շրջանակներում: Ք. Գրիգորյանը մատնանշեց, որ համայնքի անդամները հնարավորություն կունենան ուղիղ դիմել ՀՏՁ այն դեպքում, երբ չեն ցանկանա իրենց բողոքը հայտնել համայնքային մակարդակում բողոքների համակարգողին: Գրիգորյանը բացատրեց բողոքների ուղարկման բոլոր տարբերակները, այդ թվում էլ հասցեն, թե՛ գծի հեռախոսահամարը, փոստային հասցեն և կայքի հասցեն՝ նշելով, որ ՀՏՁ կոնտակտային տվյալները նշված կլինեն հանրային տեսանելի վայրում փակցված ցուցապաստառների վրա: Որպես համայնքային մակարդակում բողոքների համակարգող ընտրվեց **Խնձորեսկ վարչական միավորի ղեկավար** Երվանդ Մալունցը: Ք. Գրիգորյանը ներկայացրեց, որ հանրային վայրերում և շինհրապարակում տեղեկատվական վահանակների վրա պարբերաբար կփակցվեն ծրագրի ընթացի վերաբերյալ հայտարարություններ՝ երաշխավորելու, որ համայնքի ներկայացուցիչները կարող են բարձրացնել իրենց ձայնը մտահոգություններ ունենալու դեպքում:

Ա. Օսիպովան նշեց համայնքի անդամների և աշխատակիցների անվտանգության ապահովման միջոցառումների և շինարարության պատճառով կյանքի խաթարման ռիսկեր մասին: Օսիպովան նաև




նշեց կանխատեսվող բացասական բնապահպանական ազդեցությունների մասին՝ աղբի կուտակման, օդի աղտոտման, աղմուկի և վիբրացիայի, որոնք կարող են առաջանալ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում: Ինչպես նաև ներկայացվեցին ՀՏՁՀ-ի կողմից իրականացվող միջոցառումների մասին՝ ուղղված այս ազդեցությունների մեղմացմանը: Նշեց որ, ամսական կտրվածքով իրականացվելու է տեխնիկական վերահսկողություն և կկատարվեն ԲՄԿՊ-ում ներառված բոլոր բնապահպանական մեղմացող միջոցառումները: Նաև նշվեց, որ ԲՄԿՊ-ում ներառված են աղբահանության գործընթացին ներկայացվող պահանջները:

Ք. Գրիգորյանը և Ա. Օսիպովան խնդրեցին մասնակիցներին բարձրաձայնել իրենց հարցերը:

Հարց հնչեց շինարարական աշխատանքների մեկնարկի ժամկետների և շինարարության տևողության վերաբերյալ, որին ի պատասխան Դ. Հայրապետյանը նշեց, որ շինարարական աշխատանքները կմեկնարկեն, երբ նախագիծը կհաստատվի և կանցնի բոլոր անհրաժեշտ փորձաքննությունները, իսկ կապալառուի ընտրության գործընթացը կտևի մոտ երեք ամիս: Շինարարական աշխատանքների իրականացման համար սահմանվել է 330 օր ժամանակահատված:

Հարց հնչեց նաև ծրագրի արժեքի վերաբերյալ, որին Դ.Հայրապետյանը պատասխանեց, որ ծրագրի արժեքը կարող են հայտնել միայն մրցույթի ավարտից հետո:



**Հավելված 4. Թափոնների և ավելցուկային գրունտի տեղափոխման թույլտվություն**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԳՈՐԻՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱԴԱՆ

ՅԾԻ, Արտված՝ մարզ ք. Գորիս, ԱՍՀԿԿԿ 3, հոս. 2-25-52

« 03 » 0 2020թ. N 01/08-ՏԾԵ

ՏԵՂԵԿԱՔ

Տղվում է այն մասին, որ Հայաստանի տարածքային զտրություն հիմնադրույն կողմից ֆինանսավարկող Գորիս հունկարի լեռնարևելքի բնակավայրում «Դեպի հին լեռներ» առևտրային ձեռնարկի վերակառուցումը ծրագրի շինարարական աշխատանքների ժամանակ հանաքը այլապես բնակող և շինարար աշխատանքում է տեղափոխվել լցվելու, որի հետագործումը շինարարական կողմում է ընդ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԱՐՈՒՅԱՆՅԱՆ

Տվյալ բնակավայրում  
Բնակավայրի՝ Ա. Թովմասյան  
հոս. 2-20-65

